Գրականության
և արվեստի
թանգարան

BnF | Bibliothèque nationale de France

Փոխըմբռնման հուշագիր
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի
և
Ֆրանսիայի ազգային գրադարանի
միջև
Գրադարանների ոլորտում համագործակցության մասին

Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը (գտնվում է Արամի փ. 1, Երևան 0010)՝ ի դեմս տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանի, և Ֆրանսիայի ազգային գրադարանը (գտնվում է Ֆրանսուա Մորիակ կառամատույց, Փարիզ 75013)՝ ի դեմս նախագահ Ժիլ Պեկուի, այսուհետ՝ «Կողմեր»,

Նկատի ունենալով իրենց փոխադարձ շահերը և իրենց լիազորությունը համագործակցության ու մշակութային փոխանակումների ամրապնդման, բարելավման և խթանման, համագործակցության ոգով տեղեկատվության և փորձի փոխանակման միջոցով համատեղ աշխատելու, ինչպես նաև այդ համագործակցությունը փոխադարձաբար որոշարկված գործողությունների միջոցով խթանելու,

Ընդգծելով Կողմերի շահերի համընկնումները բազմաթիվ ոլորտներում, ներառյալ գրավոր ժառանգությունն ու մշակութային ժառանգության հուշարձանները, ինչպես նաև մշակութային ժառանգության հանրահռչակման ակտիվության զարգացումը,

համաձայնեցին հետևյալի մասին.

1. Նպատակը

Սույն փոխըմբռնման հուշագրի նպատակն է Կողմերի միջև ստեղծել համագործակցության շրջանակ՝ գրադարանային գործունեության և մշակութային

ժառանգության ոլորտում փոխանակումները և մասնագիտական համագործակցությունը խթանելու համար:

2. Համագործակցություն

ա) Կողմերը մտադիր են խթանել և դյուրացնել համագործակցությունը հետևյալ ոլորտներում՝

1/ Համագործակցություն վավերագրերի ոլորտում. Կողմերը համաձայնվում են համագործակցել ֆրանս-հայկական հարաբերությունները լուսաբանող հավաքածուների, մասնավորապես՝ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Արշակ Չոբանյանի արխիվի ֆրանսերեն վավերագրերի գույքագրման, նկարագրության և թվայնացման գործում:

2/ Մասնագիտական համագործակցություն. Կողմերը համաձայնվում են խթանել և աջակցել իրենց աշխատակիցների մասնագիտական շարժունությանը և փորձի փոխանակմանը: Մասնագիտական շարժունակության ժամանակահատվածները կֆինանսավորվեն Կողմերի կողմից կամ եվրոպական ֆինանսավորման մեխանիզմների միջոցով:

3/ Մշակութային համագործակցություն և ֆրանսերեն լեզվով ընդհանուր ժառանգության խթանում.

Կողմերը պարտավորվում են համագործակցել Ֆրանսիայի և Հայաստանի միջև գրական և մտավոր կապերի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման գործում, մասնավորապես՝ կապված Արշակ Չոբանյանի արխիվի հետ, և խթանել ֆրանսերեն լեզվով ընդհանուր ժառանգության տարածումը՝ համագործակցելով մշակութային միջնորդական գործունեության մեջ, ինչպիսիք են ուսումնական օրերի կազմակերպումը, մշակութային միջոցառումների կազմակերպումը, ժամանակավոր օգտագործման համար ցուցանմուշների տրամադրումը կամ ցուցահանդեսների անցկացումը:

բ) Սույն փոխըմբռնման հուշագիրը իրավաբանորեն պարտավորեցնող չէ: Կողմերը համատեղ կսահմանեն համագործակցության այս հատուկ ձևերի իրականացման պայմաններն ու դրույթները առանձին կիրառման համաձայնագրերով:

3. Տեսանելիություն

Կողմերը համատեղ կսահմանեն այս Փոխըմբռնման Հուշագրի և հանրային հաղորդակցություն պահանջող ցանկացած հարակից նախաձեռնության շրջանակներում հաղորդակցության ընթացակարգեր, ներառյալ յուրաքանչյուր Կողմի

տեսողական ինքնության օգտագործումը: Կողմերը կապահովեն, որ այս փոխըմբռնման հուշագրի շրջանակներում պահանջվող բոլոր հաղորդակցությունները ենթակա լինեն փոխադարձ գրավոր հաստատման:

4. Ֆինանսական պայմանավորվածություններ

Սույն փոխըմբռնման հուշագրի շրջանակներում համագործակցության գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը կիրականացվեն Կողմերի ֆինանսական հնարավորությունների շրջանակում:

5. Ներկայացուցիչներ

Կողմերից յուրաքանչյուրը կնշանակի ներկայացուցիչ՝ սույն փոխըմբռնման հուշագիրը վերահսկելու համար:

6. Եզրափակիչ դրույթներ

ա) Սույն փոխըմբռնման հուշագիրը ուժի մեջ կմտնի Կողմերի կողմից վերջին ստորագրման օրվանից և ուժի մեջ կմնա երեք (3) տարի:

բ) Կողմերը կարող են փոփոխություններ կատարել սույն փոխըմբռնման հուշագրում՝ փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

գ) Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն փոխըմբռնման հուշագիրը՝ մյուս Կողմին առնվազն երեսուն (30) աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցում տալով:

դ) Կողմերը կարող են համատեղ դադարեցնել սույն փոխըմբռնման հուշագիրը ցանկացած պահի՝ փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Ստորագրված է Երևանում 05.05.2026թ., երկու (2) օրինակով՝ հայերեն և ֆրանսերեն, որոնք հավասարազոր են:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ	**ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ**

Museum
of Literature
and Art

BnF | Bibliothèque nationale de France

Mémorandum d'entente

Entre le Musée de littérature et d'art Yeghishe Tcharents
et
la Bibliothèque nationale de France
Concernant la coopération dans le domaine des bibliothèques

Le Musée de littérature et d'art Yeghishe Tcharents, situé 1, rue Aram, Erevan 0010, représenté par Syuzanna Khojamiryan, directrice, et la Bibliothèque nationale de France, située quai François Mauriac, 75013 Paris, représentée par Gilles Pécout, président, ci-après dénommées « les Parties »,

Considérant leurs intérêts communs et leur mandat de renforcer, d'améliorer et de promouvoir la coopération et les échanges culturels, de travailler ensemble dans un esprit de coopération par l'échange d'informations et d'expertises, ainsi que de développer leur coopération par un ensemble d'activités définies d'un commun accord ;

Soulignent les nombreux domaines de convergence entre les Parties, notamment la préservation du patrimoine documentaire et des œuvres patrimoniales, et le développement d'activités de valorisation du patrimoine culturel ;

Les Parties se sont entendues sur les points suivants :

1. Objet

Le présent Mémorandum d'entente a pour objet d'établir un cadre de coopération entre les Parties afin de favoriser les échanges et la coopération professionnelle dans le domaine des pratiques bibliothécaires et de la promotion du patrimoine culturel.

2. Coopération

(a) Les Parties entendent promouvoir et faciliter la coopération dans les domaines suivants :

1/ Coopération documentaire : les Parties conviennent de coopérer à l'inventaire, à la description et à la numérisation des collections illustrant les relations franco-arméniennes, en particulier les archives françaises d'Arshak Tchobanian conservées au Musée des Lettres et des Arts de Tcharents.

2/ Coopération professionnelle : les Parties conviennent de promouvoir et de soutenir la mobilité professionnelle et les échanges d'expertise entre leurs personnels. Ces séjours de mobilité professionnelle seront financés par les Parties elles-mêmes ou par des mécanismes de financement européens.

3/ Coopération culturelle et promotion du patrimoine commun en langue française : les Parties s'engagent à œuvrer ensemble à des initiatives visant à promouvoir les relations littéraires et intellectuelles entre la France et l'Arménie, notamment en lien avec les archives d'Arshak Tchobanian, et à contribuer à la promotion du patrimoine commun en langue française, tout en collaborant à des activités de médiation culturelle, telles que l'organisation de journées d'étude, de manifestations culturelles, de prêts ou d'expositions.

(b) Le présent Mémorandum d'accord n'est pas juridiquement contraignant. Les Parties définiront conjointement les modalités de mise en œuvre de ces formes spécifiques de coopération dans des accords d'application distincts.

3. Visibilité

Les Parties définiront conjointement les modalités de communication relatives au présent Mémorandum d'accord et à toute initiative connexe, si une communication publique s'avère nécessaire, y compris l'utilisation de l'identité visuelle de chaque Partie. Les Parties veilleront à ce que toutes les communications requises en vertu du présent Mémorandum d'accord fassent l'objet d'une validation écrite mutuelle.

4. Modalités financières

Les coûts nécessaires à la mise en œuvre des activités de coopération dans le cadre du présent Mémorandum d'accord seront supportés dans la limite des capacités financières des Parties.

5. Représentants

Chacune des Parties désignera un représentant chargé du suivi du présent Mémorandum d'entente.

6. Dispositions finales

(a) Le présent Mémorandum d'entente entrera en vigueur à la date de sa dernière signature par les Parties et restera valable pendant trois (3) ans.

(b) Les Parties peuvent modifier le présent Mémorandum d'entente par consentement mutuel écrit.

(c) Chaque Partie peut résilier le présent Mémorandum d'entente en adressant à l'autre Partie un préavis écrit d'au moins trente (30) jours ouvrables.

(d) Les Parties peuvent résilier conjointement le présent Mémorandum d'entente à tout moment par consentement mutuel écrit.

Signé en deux (2) exemplaires, à Erevan, le 05/05/2026, en français et en arménien, chaque version ayant la même valeur juridique.

MUSÉE DE LITTÉRATURE ET D'ART YEGHISHE TCHARENTS	BIBLIOTHÈQUE NATIONALE DE FRANCE